ՏԵՂԵԿԱՆՔ

Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունների 11-րդ (20000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում) կետով նախատեսված պահանջների կատարման ուղղությամբ ՀՀ համայնքներում(առանց Երևանի) իրականացված աշխատանքների վերաբերյալ

(31. 10. 2016թ. դրությամբ)

1. Ավագանու նիստերի առցանց հեռարձակումը ներդրվել է Հայաստանի Հանրապետության 20 000 և ավելի բնակչություն ունեցող թվով 17քաղաքային համայնքներում:Դրանք են՝

1. Գյումրի
2. Վանաձոր
3. Հրազդան
4. Աբովյան
5. Էջմիածին
6. Կապան
7. Արմավիր
8. Գավառ
9. Չարենցավան
10. Արտաշատ
11. Սևան
12. Աշտարակ
13. Մասիս
14. Գորիս
15. Ալավերդի
16. Արթիկ
17. Դիլիջան

2. Թվարկվածներից առցանց հեռարձակումներ իրականացնում են հետևյալ 5 համայնքները.

Հ/Հ	Համայնքը	Առցանց հեռարձակման համացանցային էջի հղումը
1.	Գյումրի	https://www.youtube.com/channel/UCBulzUv7x9w8BIW_oTtuF0A https://www.youtube.com/channel/UCBulzUv7x9w8BIW_oTtuF0A/videos?flow=grid&view=2
2.	Վանաձոր	http://youtu.be/EK_crhE-lhI
3.	Հրազդան	https://www.youtube.com/watch?v=K8iVnjWHlIY&feature=youtu.be
4.	Արմավիր	http://www.ustream.tv/recorded/92195367
5.	Չարենցավան	https://www.youtube.com/watch?v=0V6SeS1qRVY

Պետք է ավելացնել, որ բացի վերը նշված 17-ից, ավագանու նիստերի առցանց հեռարձակման հնարավորություն ունեն նաև հետևյալ11 համայնքները.

1. Տաթև
2. Թումանյան
3. Սիսիան
4. Սպիտակ
5. Եղվարդ
6. Արարատ

7. Վայք
8. Ջերմուկ
9. Իջևան
10. Ստեփանավան
11. Մեղրի

Այսինքն՝ առցանց հեռարձակման հնարավորություն ունեցող համայնքների ընդհանուր թիվը 28-ն է, որոնցից 25-ը (բացի Գյումրի, Վանաձոր և Արմավիր համայքներից), ընդգրկված լինելով Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող՝«ԱջակցությունՀայաստանումտեղականժողովրդավարությանամրապնդմանը» ծրագրում, ստացել են այդ նպատակով տրամադրված անհրաժեշտ սարքավորումները և տեխնիկական առումով պատրաստ են առցանց հեռարձակումներ իրականացնելու: Առաջիկա օրերին, վերը նշված ծրագրի շրջանակներում, նախատեսված է այդ համայնքապետարանների համապատասխան մասնագետների ուսուցման դասընթացը, որից հետո կայանալիք ավագանու նիստերն այդ համայնքներում առցանց կհեռարձակվեն, և կձևավորվեն դրանց հետևելու՝ համապատասխան համացանցային էջերի հղումները: Ի դեպ, դրանցից Չարենցավան և Հրազդան համայքներն արդեն մի քանի առցանց հեռարձակումներ իրականացրել են:

3.Հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ օժտված համացանցային կայքեր ունեն 124 համայնքներ (http://infosys.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=2&dt=Sites&tv=-2), որոնց թվում՝ 20 000 և ավելի բնակիչ ունեցող 17-ը՝ հետևյալ հղումներով.

1.	Գյումրի	http://www.gyumricity.am/
2.	Վանաձոր	vanadzor.am
3.	Հրազդան	hrazdan.am
4.	Աբովյան	abovyan-kotayk.am
5.	Էջմիածին	ejmiatsin.am, էջմիածին.հայ
6.	Կապան	kapan.am
7.	Արմավիր	qaxaqarmavir.am
8.	Գավառ	gavariqaghaqapetaran.am
9.	Չարենցավան	charentsavan.am
10.	Արտաշատ	www.artashat.am
11.	Սևան	sevancity.am
12.	Աշտարակ	ashtarak.am

13.	Մասիս	masiscity.am
14.	Գորիս	goriscity.am
15.	Ալավերդի	alaverdi.am
16.	Արթիկ	artik.am
17.	Դիլիջան	dilijancity.am

4. Համաձայն Եվրոպայի խորհրդի«Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի փորձագետների կողմից տրված տեղեկատվության, այդ ծրագրում ներառված վերոհիշյալ 25 համայնքներից յուրաքանչյուրին տրամադրվել են հետևյալ սարքավորումները.

Հ/Հ	**Անվանումը**	**Քանակը**	**Միավորի գինը (ՀՀ դրամ)**
1.	Տեսախցիկ Sony Handycam HD Camcorder	1	253 000
2.	Խոսափող	3	36 750
3.	Հիշողության քարտ (32 GB)	1	6350
4.	Համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, Windows 10լիցենզիոն օպերացիոն համակարգ	1	423 360
5.	Մոնիտոր	1	74970
6.	Առցանց հեռարձակման համար նախատեսված vMixծրագրային ապահովում	1	33 810
7.	HDMI մալուխ, 20մ	1	25 300
8.	Էլեկտրական հոսանքի երկարացման լար 3մ	1	1 980
9.	Էլեկտրական հոսանքի երկարացման լար 20մ	1	10 500
10.	Ցանցային մալուխ	Ըստ կարիքի	550
11.	Ցանցային միակցիչ	Ըստ կարիքի	1 100
12.	Անխափան սնուցման սարք	1	34 300
13.	Խոսափողների բաժանարար	1	38 500
14.	Ձայնագրման քարտ	1	72 030
15.	Տեսախցիկի հենարան (շտատիվ) 2մ	1	44 900
Ընդամենը			**1 057 400**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, վերը նշվածիցբացի, ՏԻՄ-երում առցանց հեռարձակումներին վերաբերող ֆինանսական բնույթի այլ տվյալների չի տիրապետում:

Հանձնառության իրականացման նպատակով պետական բյուջեից գումարներ չեն ծախսվել:

5. Վերը նշված՝ թվով 124 համայնքապետարանների համացանցային տեղեկատվական կայքերի ճնշող մեծամասնությունը գործում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) հենքի վրա(այդ թվում՝ 20000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներից 10-ը.Աբովյան, Կապան, Չարենցավան, Արտաշատ, Սևան, Աշտարակ, Մասիս, Գորիս, Արթիկ և Դիլիջան): ՀԿՏՀ-ն ներդրված է հանրապետության ավելի քան 500 համայնքներում: Համակարգը նախատեսված է ՏԻՄ-երի գործառույթների՝ էլեկտրոնային եղանակով իրականացման համար և համացանցային հասանելիության դեպքում ծառայում է նաև որպես տվյալ համայնքի պաշտոնական համացանցային կայք:ՀԿՏՀ-ի մշակումն ու ներդրումն իրականացվել է Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում, 2006-2009թթ.,ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ:Ներկայումս համակարգի շահագործումն իրականացվում է Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն (ՏՀԶՎԿ) հասարակական կազմակերպության կողմից՝ համայնքների հետ կնքված սպասարկման պայմանագրերի հիման վրա: Քանի որ ՀԿՏՀ-ն, դա որպես համացանցային կայք կիրառող համայնքապետարանների կողմից ծառայում է նաև ՏԻՄ-երի բազմաթիվ այլ գործառույթների իրականացման համար, ուստի հնարավոր չէ ստույգ հաշվարկել, թե համակարգի ստեղծման կամ դրա սպասարկման նպատակով ծախսված գումարի որ մասն է ծախսվելիհամացանցային տեղեկատվական կայքերի ստեղծման մասով:

20000 և ավելի բնակիչ ունեցող մնացած 7համայնքների (Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Էջմիածին, Արմավիր, Գավառ և Ալավերդի) համացանցային կայքերն ստեղծվել այդ համայնքների սեփական նախաձեռնությամբ, համայնքային բյուջեների կամ այլ միջոցների հաշվին, որոնց վերաբերյալ տեղեկատվությանը նախարարությունը չի տիրապետում:

6. Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված էՀԿՏՀ-ի շահագործման նպատակով ՏՀԶՎԿ-ի կողմից անցկացված վերապատրաստման դասընթացներին՝ համակարգը

որպես համացանցային կայք կիրառող՝20000 և ավելի բնակչություն ունեցող համայնքներիաշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը.

N	Համայնք	Տարի									Ընդամենը
		2007-2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
1.	Աբովյան	6	6				1		3	7	23
2.	Կապան	4							2		6
3.	Չարենցավան	5	2	6							13
4.	Արտաշատ	7	2			4			4	8	25
5.	Սևան	5	1	2		9			2		19
6.	Աշտարակ	4	7		2		4		4	8	29
7.	Մասիս	6			1	1	3	1	4		16
8.	Գորիս	4		2	20				3	5	34
9.	Արթիկ	3	1	4			3	1			12
10.	Դիլիջան	3	2	4					5	9	23
Ընդամենը											**200**

7. Բաց կառավարման գործընկերություն - Հայաստան գործողությունների երկրորդ ծրագրի 11-րդ պարտավորությամբնախանշված գործողություններն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացված են: